ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

04.11.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա.Ամիրյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» *ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.*

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ)
2	«Կարկոմավտո» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.

2 .«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Կարկոմավտո» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ) հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված լիազորագրում (անգլերեն տարբերակ) նշված է 29.10.2019թ., այնինչ լիազորագրի թարգմանության մեջ նշված է 24.10.2019թ., այսինքն ըստ ներկայացված փաստաթղթերի լիազորագիրը թարգմանվել է այն տրվելուց ավելի շուտ: Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունը՝ գնահատող հանձնաժողովը 05.11.2019թ. որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը 05.11.2019թ. ներկայացրել է պահանջվող շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Ամիրյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի նվանում	Հ/Մ	Քանակ	Նախահաշվային (պլանավորված)գին	«Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ) առաջարկ		«Կարկոմավտո» ՍՊԸ-ի առաջարկ		1-ին տեղ զբաղեցրած մասնակից
					Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	
1	Մինիավտոբուսներ (միկրոավտոբուս)	հատ	1	19900000	15500000	18600000	16583334	19900000	Բանակցություն

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ սույն ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշմամբ սահմանված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ 05.11.2019թ. որոշեց նիստը կասեցնել և հայտ ներկայացրած մասնակիցների հետ 08.11.2019թ. ժամը 10:20 կազմակերպել միաժամանակյա բանակցություններ: Նշված օրը և ժամին բանակցությունների համար ներկայացավ «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ): Քանի որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ն բանակցություններին չի ներկայացել վերջինիս գինը մնաց առանց փոփոխության: Բանակցությունների արդյունքում «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ) նախկինում ներկայացրած գինը թողեց առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Ամիրյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 11.11.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ):

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Ամիրյան)

5.1 Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան